



Grant Thornton

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն

«Այբ» Կրթական Հիմնադրամ

2015թ. դեկտեմբերի 31

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	1
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	4
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	6
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9



Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

www.grantthornton.am

«Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Մեր կողմից իրականացվել է «Այբ» կրթական հիմնադրամի (Հիմնադրամ) կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվություն

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը



մշակում է համապատասխան ընթացակարգեր ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են մաս կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիքի ձևափոխման հիմքեր

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 4-ում 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցները ներառում են 1,645,969 հազար դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,293,282 հազար դրամ) անավարտ հիմնական միջոցներ, որոնք իրենցից ներկայացնում են Հիմնադրամի կողմից վճարված անշարժ գույքի շինարարական աշխատանքների արժեքը: Հիմնական միջոցները սեփականության իրավունքով պատկանում և փաստացի շահագործվում են երրորդ կողմի կողմից: Հիմնադրամը ճանաչել է վերոնշյալ անշարժ գույքը որպես ակտիվ իր ֆինանսական հաշվետվություններում, ինչը հակասում է ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտին:

Վերոնշյալ խնդրի արդյունքում Հիմնադրամի 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների և ակտիվներին վերաբերող շնորհների մնացորդները գերագնահատված են 1,645,969 հազար դրամով (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,293,282 հազար դրամով):

Ձևափոխված կարծիք

Մեր կարծիքով, բացառությամբ *Կարծիքի ձևափոխման հիմքեր* պարագրաֆում նշված հարցի ազդեցությունից, ֆինանսական հաշվետվությունները տալիս են «Այր» կրթական հիմնադրամի՝ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և մույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Այլ հանգամանքներ

2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտ են արվել այլ աուդիտորի կողմից: Վերջինս 2015թ. դեկտեմբերի 25-ին արտահայտել է վերապահումով եզրակացություն այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

31 օգոստոսի 2016թ.



Գագիկ Գյուրոդադյան

Տնօրեն



Լիլիթ Արաբաջյան, FCCA

Առաջադրանքի ղեկավար

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծանոթ.	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկա- յացված)	2014թ. հունվարի 1-ի դրությամբ
Ակտիվներ				
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>				
Հիմնական միջոցներ	4	1,897,583	1,504,735	1,477,101
Ոչ նյութական ակտիվներ	5	6,025	4,250	51,397
Հետաձգված հարկային ակտիվներ	6	25,110	18,078	2,991
Տրամադրված փոխառություններ	7	24,735	24,735	-
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ծեռքերելու համար		5,017	76,238	77,340
		<u>1,958,470</u>	<u>1,628,036</u>	<u>1,608,829</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>				
Պաշարներ	8	74,426	10,276	8,386
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	287,950	108,806	21,565
Ժամկետային ավանդներ	10	121,547	-	-
Տրամադրված փոխառություններ	7	4,996	10,008	23,946
Ընթացիկ հարկային ակտիվներ		3,351	-	197
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	11	344,682	104,955	63,882
		<u>836,952</u>	<u>234,045</u>	<u>117,976</u>
Ընդամենը ակտիվներ		<u><u>2,795,422</u></u>	<u><u>1,862,081</u></u>	<u><u>1,726,805</u></u>

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ

		2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկա- յացված)	2014թ. հունվարի 1-ի դրությամբ
	Ծանոթ.			
<i>Զուտ ակտիվներ</i>				
Կուտակված շահույթ		12,686	33,478	10,527
		12,686	33,478	10,527
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>				
Ստացված փոխառություններ	12	5,239	3,892	-
Ակտիվներին վերաբերող շնորհներ	13	1,790,806	1,579,657	1,404,714
		1,796,045	1,583,549	1,404,714
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>				
Ստացված փոխառություններ	12	31,621	28,087	67,002
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	217,850	124,480	142,987
Եկամուտներին վերաբերող շնորհներ	15	737,220	88,396	99,470
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		-	4,091	2,105
		986,691	245,054	311,564
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		2,795,422	1,862,081	1,726,805

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2016թ. օգոստոսի 31-ին:

Դավիթ Սահակյան
Գործադիր տնօրեն



Գրիգոր Գաբրիելյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ

		2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկա- յացված)
	Ծանոթ.		
Եկամուտ շնորհներից և նվիրատվություններից	16	857,455	521,120
Հասույթ ծառայությունների մատուցումից		96,099	147,078
Այլ եկամուտ		2,440	3,242
		<u>955,994</u>	<u>671,440</u>
Տրամադրված շնորհներ և բարեգործություն	17	(212,334)	(202,744)
Հատուցումներ աշխատակիցներին		(338,397)	(185,170)
Օգտագործված նյութերի արժեք		(226,295)	(79,628)
Վարչական և ընդհանուր ծախսեր	18	(85,551)	(61,002)
Օժանդակ ծառայություններ	19	(56,777)	(19,247)
Մաշվածություն և ամորտիզացիա		(57,444)	(44,164)
Այլ գործառնական ծախսեր	20	(12,095)	(55,554)
Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)		<u>(32,899)</u>	<u>23,931</u>
Ֆինանսական եկամուտ		3,968	1,269
Ֆինանսական ծախսեր		(1,603)	(5,538)
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս), զուտ	21	3,344	(1,956)
Շահույթ/(վնաս) մինչև հարկերը		<u>(27,190)</u>	<u>17,706</u>
Շահութահարկի գծով փոխհատուցում	22	6,398	5,245
Տարվա շահույթ/(վնաս)		<u>(20,792)</u>	<u>22,951</u>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		<u>(20,792)</u>	<u>22,951</u>

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Չուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կուտակված շահույթ
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	10,527
Տարվա շահույթ	22,951
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	22,951
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	33,478
Տարվա վնաս	(20,792)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(20,792)
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,686

Չուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված մուտքեր	95,933	176,295
Ստացված շնորհներ և նվիրատվություններ	1,721,315	711,506
Այլ մուտքեր	-	44
Վճարումներ մատակարարներին ապրանքների և ծառայությունների համար	(995,663)	(557,752)
Վճարումներ աշխատակիցներին	(239,938)	(134,456)
Վճարումներ բյուջե	(189,277)	(72,421)
Այլ ելքեր	(2,595)	(2,616)
<i>Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ</i>	<i>389,775</i>	<i>120,600</i>
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տրված կանխավճարներ	(6,377)	(7,519)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(31,708)	(20,488)
Փոխառությունների տրամադրում և ավանդների ներգրավում	(118,288)	(10,524)
Ստացված տոկոսային եկամուտ	832	1,123
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	<i>(155,541)</i>	<i>(37,408)</i>
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերից և փոխառություններից մուտքեր	2,969	3,757
Վարկերի և փոխառությունների մարում	(172)	(50,761)
<i>Ֆինանսավորման գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ</i>	<i>2,797</i>	<i>(47,004)</i>
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ	237,031	36,188
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	2,696	4,885
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	104,955	63,882
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	344,682	104,955

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Այբ» կրթական հիմնադրամը (Հիմնադրամ) ստեղծվել է 2006թ. դեկտեմբերի 4-ին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Հիմնադրամի հիմնական նպատակն է՝ Հայաստանում բարձրորակ, բազմաբևեռ, օրինակելի կրթական միջավայր ստեղծելը, Հայաստանի կրթական համակարգի զարգացմանը և կատարելագործմանը նպաստելը, դպրոցականներին և երիտասարդներին ուսման հարցում և իրենց կարիերայի զարգացման գործում աջակցելը, կրթական ոլորտի կազմակերպությունների աշխատակիցների օժանդակումը և նրանց շահերի պաշտպանումը:

Հիմնադրամը քաղաքացիների և իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարումների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը համախմբում է այն մարդկանց հնարավորությունները, ովքեր գիտակցում են յուրաքանչյուրի կյանքում կրթության կարևորությունը և կամենում են ստեղծել որակյալ ու բազմակողմանի կրթական միջավայր:

Հիմնադրամի հիմնադիրներն են՝

- Աշոտ Ասլանյանը,
- Դավիթ Փախչանյանը,
- Արամ Փախչանյանը,
- Կարո Սարգսյանը,
- Կարեն Մուսաելյանը,
- Դավիթ Յանը,
- Մաթևոս Արամյանը,
- «Օկտագոն» ՍՊԸ:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է վեց անդամից՝

- Դավիթ Փախչանյան,
- Արամ Փախչանյան,
- Աշոտ Մկրտչյան,
- Արեգ Զաքոյան,
- Կարո Սարգսյան,
- Սարգիս Բադալյան:

Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը 2015թ. կազմել է 74 մարդ (2014թ.՝ 40 մարդ):

Հիմնադրամի իրավաբանական և գործունեության իրականացման հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի 19ա:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից:

Ներկայումս ՖՀՄՄ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՄ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՄ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»:

2.2 Ծանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՄ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 23-ում:

2.5 Ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Ֆինանսական հաշվետվությունները, նախորդ տարիների համադրելի տեղեկատվությունը ներառյալ, ներկայացված են այնպես, կարծես ուղղումը կատարվել է այն

ժամանակաշրջանում, որի ընթացքում առաջացել է դրա կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը վերագրվում է այդ տարվա ֆինանսական տեղեկատվությանը: Ֆինանսական հաշվետվությունների համադրելի տեղեկատվության նախորդող ժամանակաշրջաններին վերաբերող ուղղման գումարը ճշգրտվում է ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանում:

2.6 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2015թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) և ՀՀՄՄԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև: Չնայած այս նոր ստանդարտները և փոփոխությունները առաջին անգամ կիրառելի են 2015թ. ընթացքում, դրանք էական ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2015թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Տարեկան բարեփոխումներ՝ 2010-2012թթ.

2010-2012թթ. տարեկան բարեփոխումները մի շարք ՖՀՄՄ-ներում կատարել են որոշ անմշան փոփոխություններ: Հիմնադրամին վերաբերող փոփոխությունները ամփոփված են ստորև.

ՖՀՄՄ 13. «Իրական արժեքի չափում»

Կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքեր.

- փոփոխվում են Եզրակացությունների համար հիմքերը՝ պարզաբանելու համար, որ ընկերությունը պարտադրված չէ հաստատված տոկոսադրույք չունեցող կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքերը զեղչել հաշիվ-ապրանքագրում նշված գումարից ցածր արժեքի, եթե զեղչման ազդեցությունն էական չէ:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից: Ստորև ներկայացված է տեղեկատվություն մոր ստանդարտների, փոփոխությունների և մեկնաբանությունների վերաբերյալ, որոնք նախատեսվում է, որ կիրառելի կլինեն Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների համար: Որոշ այլ մոր ստանդարտներ և մեկնաբանություններ թողարկվել են, սակայն չի ակնկալվում, որ դրանք Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն կունենան:

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» (2014թ.)

ՀՀՄՄԽ-ը թողարկել է ՖՀՄՍ 9-ը «Ֆինանսական գործիքներ» (2014թ.)՝ ներկայացնելով իր ծրագրի ավարտը, ինչը պետք է փոխարինի ՀՀՄՍ 39-ին «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը»: Նոր ստանդարտն ընդարձակ փոփոխություններ է ներկայացնում ՀՀՄՍ 39-ի ուղեցույցում ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վերաբերյալ և ներկայացնում է ֆինանսական ակտիվների արժեզրկման մոր «կանխատեսվող վարկային կորուստներ» մոդելը: ՖՀՄՍ 9-ը նաև ապահովում է մոր ուղեցույց՝ հեջի հաշվառման կիրառման վերաբերյալ:

Հիմնադրամի ղեկավարությունը դեռ պետք է գնահատի այս մոր ստանդարտի ազդեցությունը Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա: Նոր ստանդարտը պետք է կիրառվի 2018թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»

ՖՀՄՍ 15-ը հասույթի ճանաչման մոր պահանջներ է ներկայացնում՝ փոխարինելով ՀՀՄՍ 18-ը «Հասույթ», ՀՀՄՍ 11-ը «Կառուցման պայմանագրեր» և հասույթի հետ կապված որոշ այլ մեկնաբանություններ: Նոր ստանդարտը սահմանում է հասույթի ճանաչման մոդել՝ հիմնված վերահսկողության վրա և լրացուցիչ ուղեցույց է տրամադրում գործող ՖՀՄՍ-ներում մանրամասնորեն չներկայացված տարբեր ոլորտների վերաբերյալ, ներառյալ՝ ինչպես հաշվառել բազմակի պարտավորությունների կատարման, փոփոխում գնագոյացմամբ, հաճախորդներին փոխհատուցման իրավունքների, մատակարարների՝ հետգնման տարբերակների պայմաններ և այլ բարդություններ պարունակող պայմանագրերը:

ՖՀՄՍ 15-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Հիմնադրամի ղեկավարությունը դեռևս չի գնահատել ՖՀՄՍ 15-ի ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 16 «Վարձակալություն»

ՖՀՄՍ 16-ում ներկայացված են վարձակալության հաշվառման մոր պահանջներ և փոփոխություններ: ՖՀՄՍ 16-ը սահմանում է, որ վարձակալները պետք է հաշվառեն վարձակալությունները «հաշվապահական հաշվեշշում»՝ ճանաչելով «օգտագործման իրավունքը» որպես ակտիվ և վարձակալության գծով համապատասխան պարտավորությունը:

Միևնույն ժամանակ ՖՀՄՍ 16-ը՝

- փոփոխում է վարձակալության սահմանումը,
- սահմանում է ակտիվի և պարտավորության հաշվառման պահանջներ, այդ թվում՝ դրանց այնպիսի առանձնահատկությունների, ինչպիսիք են ոչ-վարձակալական տարրերը, փոփոխվող վարձակալական վճարները և արտոնյալ (օպցիոն) ժամանակաշրջանները;
- ազատման հնարավորություն է տալիս կարճաժամկետ վարձակալությունների և ցածրարժեք ակտիվների համար,
- փոփոխում է «վաճառք հետադարձ վարձակալությամբ» պայմանավորվածությունների հաշվառումը,
- մեծապես պահպանում է ՀՀՄՍ 17-ի մոտեցումը՝ վարձատուների հաշվառման մասով;
- ներկայացնում է նոր բացահայտման պահանջներ:

ՖՀՄՍ 16-ը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ստանդարտի վաղաժամկետ կիրառումը՝ պայմանով, որ ՖՀՄՍ 15-ը «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ», նույնպես կիրառվի: Հիմնադրամի ղեկավարությունը դեռևս չի գնահատել ՖՀՄՍ 16-ի ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 483.75 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 528.69 ՀՀ դրամ, 1 անգլիական ֆունտ ստերլինգը՝ 717.69 ՀՀ դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 474.97 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 577.47 ՀՀ դրամ, 1 անգլիական ֆունտ ստերլինգը՝ 737.68 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը):

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահություն կամ վնասում:

3.2 Գիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է

ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Սարքավորումներ և համակարգչային տեխնիկա	- 5-10 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 5-10 տարի
Տնտեսական գույք	- 1-5 տարի
Այլ	- 1-10 տարի:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետների ընթացքում, որը կազմում է 2-5 տարի լիցենզիաների և արտոնագրերի համար, և 10 տարի համակարգչային ծրագրերի համար:

3.4 Վարձակալված ակտիվներ

Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են որպես ծախս գծային հիմունքով: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության ծախսերը, ծախսագրվում են իրականացման պահին:

3.5 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝

առաջին ելք (ԱՄԱԵ), և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.6 Ֆինանսական գործիքներ

ճանաչում, սկզբնական չափում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և հետագա չափումը

Հետագա չափումն իրականացնելու համար ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների սկզբնական ճանաչման ժամանակ բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Հիմնադրամի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 24.2-ում:

Ընդհանուր առմամբ, Հիմնադրամի բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվների

հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են «Ֆինանսական ծախս», «Ֆինանսական եկամուտ» կամ «Այլ ֆինանսական արդյունքներ» հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է «Այլ ծախսեր» հոդվածում:

i. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում և ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Հիմնադրամը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

ii. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով, ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են և ներառում են առևտրային բանկերում ավանդները: Ներդրումները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, եթե Հիմնադրամի ղեկավարությունը մտադրված է պահել դրանք մինչև դրանց մարման ժամկետը:

Ավանդները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ի լրումն, եթե առկա է ավանդների արժեզրկման օբյեկտիվ ապացույց, ֆինանսական ակտիվը չափվում է գնահատված դրամական

միջոցների հոսքերի ներկա արժեքով: Ավանդների հաշվեկշռային արժեքի ցանկացած փոփոխություն ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և հետագա չափումը

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները և առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 24.2-ում:

i. Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

ii. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.7 Արժեզրկում

Դիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գույտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետազայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույթով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է, և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով շահույթում կամ վնասում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

3.8 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սխտեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան

ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհիք, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

3.9 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Հիմնադրամն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գեղջման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.10 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Հիմնադրամը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Հիմնադրամը հաշվետու ամսաթվի

դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.11 Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Հիմնադրամի կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները:

Հիմնադրամի հասույթը գոյանում է ստացված նվիրատվություններից, շնորհներից ստացված եկամուտներից և տարբեր ուսումնական ծրագրերի կազմակերպումից:

Ծառայությունների մատուցում

Ծառայությունների մատուցումից ստացված հասույթը ճանաչվում է, երբ՝

- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Հիմնադրամ,
- հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը,
- հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

«Այբ» կորպորացիայի հիմնադրամ
ֆինանսական հաշվետվություններ
2015թ. դեկտեմբերի 31

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Սարքավորում- ներ, համակարգ- չային տեխնիկա	Տրամադր- տային միջոցներ	Տնտեսական գույք	Այլ հիմնական միջոցներ	Ամսական հիմնական միջոցներ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>						
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	108,617	24,334	89,003	48,257	1,269,971	1,540,182
Ավելացում	16,787	19,256	10,778	613	23,311	70,745
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	125,404	43,590	99,781	48,870	1,293,282	1,610,927
Ավելացում	54,794	8,890	2,181	29,943	367,928	463,736
Օտարում	(681)	-	(1,625)	(153)	(15,241)	(17,700)
Ներքին շարժ	(71)	-	60	11	-	-
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	179,446	52,480	100,397	78,671	1,645,969	2,056,963
<i>Կուտակված մաշվածություն</i>						
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	32,051	2,519	17,193	11,318	-	63,081
Տարվա հաշվարկ	19,424	3,121	12,974	7,592	-	43,111
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	51,475	5,640	30,167	18,910	-	106,192
Տարվա հաշվարկ	23,987	5,626	13,327	11,478	-	54,418
Օտարման հետևանքով դուրսգրում	(345)	-	(808)	(77)	-	(1,230)
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	75,117	11,266	42,686	30,311	-	159,380
<i>Հաշվենթադրյալ արժեք</i>						
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	73,929	37,950	69,614	29,960	1,293,282	1,504,735
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	104,329	41,214	57,711	48,360	1,645,969	1,897,583

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,645,969 հազար դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,293,282 հազար դրամ) անավարտ հիմնական միջոցներն իրենցից ներկայացնում են Հիմնադրամի կողմից վճարված անշարժ գույքի շինարարական աշխատանքների արժեքը: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,645,969 հազար դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,293,282 հազար դրամ) անավարտ հիմնական միջոցներն իրենցից ներկայացնում են Հիմնադրամի կողմից վճարված անշարժ գույքի շինարարական աշխատանքների արժեքը, որը համաձայն 2010թ. ՀՀ կառավարության որոշման պետք է որպես ավանդ ներդրվի «Այբ կրթական հանգույց» ծրագիրն իրականացնելու նպատակով: Համաձայն համապատասխան սեփականության վկայականի անշարժ գույքը պատկանում է այլ ընկերության:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմում է 8,070 հազար դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6,773 հազար դրամ):

5 Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ

	Համա- կարգային ծրագրեր	Լիցենզիա- ներ, արտոնա- գրեր, այլ	Մշակման ընթացքում գտնվող ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>				
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	2,500	251	48,372	51,123
Ավելացում	2,269	26	-	2,295
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,769	277	48,372	53,418
Ավելացում	-	2,460	-	2,460
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,769	2,737	48,372	55,878
<i>Կուտակված ամորտիզացիա</i>				
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	215	12	-	227
Տարվա հաշվարկ	541	28	-	569
Արժեզրկում	-	-	48,372	48,372
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	756	40	48,372	49,168
Տարվա հաշվարկ	573	112	-	685
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,329	152	48,372	49,853
<i>Հաշվեկշռային արժեք</i>				
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,013	237	-	4,250
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,440	2,585	-	6,025

6 Հետաձգված հարկային ակտիվներ

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2015թ.	2014թ. (վերաներկա- յացված)
Տարեսկզբի մնացորդ	18,078	2,991
Շահույթում կամ վնասում ճանաչված փոխհատուցում	7,032	15,087
Տարեվերջի մնացորդ	25,110	18,078

2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2015թ. հունվարի 1	Շահույթում կամ վնասում ճանաչված	2015թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Ոչ նյութական ակտիվներ	9,674	-	9,674
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	176	-	176
Ակտիվներին վերաբերող շնորհներ Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,134	4,026	8,160
	4,094	3,006	7,100
	18,078	7,032	25,110
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	18,078	7,032	25,110

2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2014թ. հունվարի 1	Շահույթում կամ վնասում ճանաչված	2014թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Ոչ նյութական ակտիվներ	-	9,674	9,674
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	176	176
Ակտիվներին վերաբերող շնորհներ Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	4,134	4,134
	2,991	1,103	4,094
	2,991	15,087	18,078
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	2,991	15,087	18,078

Ներառյալ՝	2015թ.	2014թ.
Փոխհատուցման ենթակա ավելի քան 12 ամսվա ընթացքում	8,092	4,718
Փոխհատուցման ենթակա 12 ամսվա ընթացքում	17,018	13,360

7 Տրամադրված փոխառություններ

Հազար դրամ	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փոխառություններ տրված կապակցված կողմին	-	-	24,735	24,735
Փոխառություններ տրված աշխատակիցներին	4,996	10,008	-	-
	<u>4,996</u>	<u>10,008</u>	<u>24,735</u>	<u>24,735</u>

8 Պաշարներ

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Նյութեր	18,850	3,570
Շինանյութ	49,709	-
Վառելիք	484	735
Այլ	5,383	5,971
	<u>74,426</u>	<u>10,276</u>

Տարվա ընթացքում ծախս ճանաչված պաշարների գումարը կազմում է 190,924 հազար դրամ (2014թ.՝ 39,608 հազար դրամ):

9 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկա- յացված)
Ծառայությունների մատուցումից դեբիտորական պարտքեր	3,026	29
Շնորհների գծով դեբիտորական պարտքեր	99,403	10,874
	<u>102,429</u>	<u>10,903</u>
Կասկածելի դեբիտորական պարտքերի գծով պահուստ	(880)	(880)
Ձուտ առևտրային դեբիտորական պարտքեր	<u>101,549</u>	<u>10,023</u>
Տրված կանխավճարներ	168,051	95,089
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	10,726	747
Այլ	7,624	2,947
	<u>287,950</u>	<u>108,806</u>

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Շնորհների գծով դերիտորական պարտքերն իրենցից ներկայացնում են տարբեր բարերարների հետ կնքված պայմանագրերի շրջանակներում շինարության, կրթաթոշակների և այլ նպատակների համար ստացման ենթակա գումարները:

Կասկածելի դերիտորական պարտքերի գծով պահուստի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ

	2015թ.	2014թ.
Տարեսկզբի մնացորդ	880	-
Տարվա ընթացքում պահուստի աճ	-	880
Տարեվերջի մնացորդ	880	880

Առևտրային դերիտորական պարտքի հավաքագրելիությունը որոշելիս հաշվի է առնվում դերիտորի պարտքի մարման ժամանակացույցի ցանկացած փոփոխություն՝ սկսած պարտքի առաջացման պահից մինչև հաշվետու ամսաթիվը: Հավաքագրելիության ռիսկի կենտրոնացումը սահմանափակ է՝ ելնելով հաճախորդների շրջանակների մեծությունից և կապակցված չլինելու հանգամանքից: Հետևաբար, դեկավարությունը հավատարմացված է, որ ստեղծված կասկածելի դերիտորական պարտքի պահուստից զատ լրացուցիչ պահուստ չի պահանջվում:

Տե՛ս ծանոթագրություն 24՝ առևտրային և այլ դերիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

10 Ժամկետային ավանդներ

Ավանդները ներդրված են «Ինելեքթրանկ» ՓԲԸ-ում՝ 118,287 հազար դրամը 5% տարեկան տոկոսադրույքով, իսկ 3,260 հազար դրամը 17% տարեկան տոկոսադրույքով:

11 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	130	130
Բանկային հաշիվներ	344,552	104,825
	344,682	104,955

Տե՛ս ծանոթագրություն 24՝ դրամարկղում և բանկում մնացորդների արժույթների բացահայտման համար:

12 Ստացված փոխառություններ

Հազար դրամ	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ստացված փոխառություններ կապակցված կողմից	31,621	28,087	1,907	1,886
Բարերարներից ստացված փոխառություններ	-	-	3,332	2,006
	<u>31,621</u>	<u>28,087</u>	<u>5,239</u>	<u>3,892</u>

Կապակցված կողմից 30,042 հազար դրամ փոխառությունը ստացվել է 7.5 տոկոս տարեկան տոկոսադրույքով, իսկ 2015թ. նոյեմբեր ամսից համաձայն կազմված համաձայնագրի վերաճեցվել է անտոկոսի:

13 Ակտիվների վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2015թ.	2014թ. (վերաներկա- յացված)
Տարեսկզբի մնացորդ	1,579,657	1,404,714
Տարվա ընթացքում ստացված	267,267	266,586
Շահույթում կամ վնասում ճանաչված եկամուտ	(56,118)	(91,643)
Տարեվերջի մնացորդ	<u>1,790,806</u>	<u>1,579,657</u>

14 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	43,697	14,688
Ստացված կանխավճարներ	46,354	29,876
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	30,067	36,443
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներից	35,695	20,470
Կրեդիտորական պարտքեր շնորհների գծով	60,347	22,509
Այլ	1,690	494
	<u>217,850</u>	<u>124,480</u>

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 16 օր (2014թ.՝ 25 օր): Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Հիմնադրամն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Հիմնադրամի արտարժույթային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 24-ում:

15 Եկամուտներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2015թ.	2014թ. (վերաներկա- յացված)
Տարեսկզբի մնացորդ	88,396	99,470
Տարվա ընթացքում ստացված	1,066,887	428,979
Շահույթում կամ վնասում ճանաչված եկամուտ	(418,063)	(440,053)
Տարեվերջի մնացորդ	737,220	88,396

16 Եկամուտ շնորհներից և նվիրատվություններից

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Կրթության և գիտության ազգային ծրագրի իրականացումից եկամուտ	383,276	111,641
Կառուցման աշխատանքների փոխհատուցումից եկամուտ	6,623	-
Այլ շնորհներ և նվիրատվություններ	467,556	409,479
	857,455	521,120

17 Տրամադրված շնորհներ և բարեգործություն

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Իրականացված շինարարական աշխատանքների արժեք	6,623	-
Տրամադրված շնորհներ	205,711	202,744
	212,334	202,744

Իրականացված շինարարական աշխատանքների արժեքն իրենից ներկայացնում է դպրոցի մասնաշենքերի, եկեղեցու կառուցման և այլ շինարարական աշխատանքներ:

18 Վարչական և ընդհանուր ծախսեր

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վարձակալության ծախսեր	48,433	19,131
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	13,065	13,284
Աուդիտի և խորհրդատվության ծախսեր	10,201	7,472
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	10,600	17,753
Այլ	3,252	3,362
	85,551	61,002

19 Օժանդակ ծառայություններ

Հազար դրամ

	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	26,404	2,798
Փոխադրման ծախսեր	3,481	3,050
Այլ	26,892	13,399
	<u>56,777</u>	<u>19,247</u>

20 Այլ գործառնական ծախսեր

Հազար դրամ

	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտարժույթի փոխարկման ծախսեր	1,629	1,963
Ոչ նյութական ակտիվների արժեզրկում	-	48,372
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր	1,777	198
Այլ	8,689	5,021
	<u>12,095</u>	<u>55,554</u>

21 Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս), զուտ

Հազար դրամ

	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխառություններ և դեբիտորական պարտքեր	3,158	5,562
Ֆինանսական պարտավորություններ՝ չափվող ամորտիզացված արժեքով	186	(7,518)
	<u>3,344</u>	<u>(1,956)</u>

22 Շահութահարկի գծով փոխհատուցում

Հազար դրամ

	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկա- յացված)
Ընթացիկ հարկ	-	(9,842)
Ընթացիկ տարում ծանաչված՝ նախորդ տարվա ընթացիկ հարկին վերաբերող ճշգրտումներ	(634)	-
Հետաձգված հարկ	7,032	15,087
	<u>6,398</u>	<u>5,245</u>

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը (համաձայն ՀՀՄՍ)	(27,190)		17,706	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով (2014թ.՝ 20%) (Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	(5,438)	20	3,541	20
Շահութահարկի գծով փոխհատուցում	(966)	3.5	(8,786)	(49.6)
	(6,398)	23.5	(5,245)	(29.6)

23 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

23.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Հիմնադրամն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

24 Ֆինանսական գործիքներ

24.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.7-ում:

24.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ ժամկետային ավանդներ	121,547	-
Փոխառություններ և դեբիտորական պարտքեր		
Տրամադրված փոխառություններ	29,731	34,743
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	109,173	12,970
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	344,682	104,955
	<u>605,133</u>	<u>152,668</u>

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	140,232	58,161
Ստացված փոխառություններ	36,860	31,979
	<u>177,092</u>	<u>90,140</u>

25 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի, որը բխում է գործառնական գործունեությունից:

Արտարժույթային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Հիմնադրամի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է արտերկրներից ստացված արտարժույթով նվիրատվություններից:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Հիմնադրամը ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև:
Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Այլ
<i>Ֆինանսական ակտիվներ</i>		
Տրամադրված փոխառություններ	4,996	-
Ժամկետային ավանդներ	117,887	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	99,403	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	305,819	829
	<u>528,105</u>	<u>829</u>
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	180	1,107
Ստացված փոխառություններ	35,133	-
	<u>35,313</u>	<u>1,107</u>
Զուտ արդյունք	<u>492,792</u>	<u>(278)</u>

Հոդված

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Այլ
<i>Ֆինանսական ակտիվներ</i>		
Տրամադրված փոխառություններ	4,512	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10,874	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	10,478	44,293
	<u>25,864</u>	<u>44,293</u>
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	329
Ստացված փոխառություններ	30,080	-
	<u>30,080</u>	<u>329</u>
Զուտ արդյունք	<u>(4,216)</u>	<u>43,964</u>

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2014թ.՝ 10%) աճի/նվազմանը: 10%-ը (2014թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է:
Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2014թ.՝ 10%):

Դրամի արժեքումը ԱՄՆ դոլարի նկատմամբ 10%-ով (2014թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

	ԱՄՆ դոլարի ազդեցություն	
	2015թ.	2014թ.
Շահույթ կամ վնաս	49,279	(422)

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Հիմնադրամի՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Այս ռիսկի ազդեցությունը Հիմնադրամի համար առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը, ժամկետային ավանդները, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները, ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները և այլն: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ		
Ժամկետային ավանդներ	121,547	-
Տրամադրված փոխառություններ	29,731	34,743
Դեբիտորական պարտքեր	109,173	12,970
Մնացորդներ բանկերում	344,682	104,955
	<u>605,133</u>	<u>152,668</u>

Հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը ժամկետանց դեբիտորական պարտքերի գծով ստեղծել է պահուստ՝ 880 հազար դրամի չափով (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 880 հազար դրամ):

Դրամական միջոցների և դրանց համարժեքների մասով պարտքային ռիսկն ընդունելի է, քանի որ պայմանագրային գործընկերները հեղինակավոր բանկեր են:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Հիմնադրամն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հիմնադրամի պարտավորություններն անտոկոս են և ենթակա են մարման մինչև 6 ամիս ժամկետը:

Հիմնադրամն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Հիմնադրամի դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

26 Պայմանականություններ

26.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

26.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար մոտ է հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

27 Կապակցված կողմեր

Հիմնադրամի կապակցված կողմերը հանդիսանում են Հիմնադրամի հիմնադիրները, հոգաբարձուների խորհրդի անդամները, հիմնական ղեկավար անձնակազմը և այլն, ինչպես նկարագրված է ստորև:

27.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործարքներ		
Հիմնադրի կողմից հիմնադրված հիմնադրամներ, ընկերություններ		
Շնորհների տրամադրում	137,568	168,546
Ստացված ծառայություններ	75	14,400
Ծառայությունների մատուցում	-	2,000
Փոխառությունների տրամադրում	20,000	23,000
Հոգաբարձուների խորհրդի անդամներ և նրանց փոխկապակցված կողմեր		
Ապրանքների ձեռքբերում և ծառայությունների ստացում	43,928	22,852
Ղեկավար անձնակազմ		
Ծառայությունների ստացում	3,600	3,600
Շնորհների ստացում	1,494	1,418
Փոխառությունների ստացում	-	722
Փոխառությունների տրամադրում	-	37,215
Աշխատավարձ	95,030	63,054
Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդներ		
Հիմնադրի կողմից հիմնադրված հիմնադրամներ, ընկերություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	60,347	22,509
Հոգաբարձուների խորհրդի անդամներ և նրանց փոխկապակցված կողմեր		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,138	537
Ղեկավար անձնակազմ		
Եկամուտներին վերաբերող շնորհներ	635,843	504,596
Տրված կանխավճարներ	795	4,388
Ստացված փոխառություններ	32,965	29,802
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	493	141
Տրամադրված փոխառություններ	24,735	24,735

28 Հիմնադրելի ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

2015թ. ընթացքում Հիմնադրամը՝ նախորդ տարիների առնչությամբ սխալներ գտնելու հետևանքով, որոշել է վերաներկայացնել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունները համաձայն ՀՀՍՍ8-ի. «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»: Վերոհիշյալի արդյունքում, Հիմնադրամի ղեկավարությունը որոշել է համապատասխան ճշգրտումներ կատարել ֆինանսական հաշվետվություններում, որոնք

կիրառվել են հետընթաց՝ համաձայն Հիմնադրամի որդեգրած քաղաքականության (տե՛ս ծանոթագրություն 2.5):

Ճշգրտումների ազդեցության մանրամասները ներկայացված են ստորև:

Հազար դրամ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Համաձայն նախորդ հաշվետվության	Ճշգրտում	Ճշգրտված մնացորդ
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	1,504,735	-	1,504,735
Ոչ նյութական ակտիվներ	4,250	-	4,250
Տրամադրված փոխառություններ	24,735	-	24,735
Հետաձգված հարկային ակտիվներ	13,944	4,134	18,078
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար	88,169	(11,931)	76,238
	<u>1,635,834</u>		<u>1,628,036</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	10,276	-	10,276
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	86,808	21,998	108,806
Ժամկետային ավանդներ	10,008	(10,008)	-
Տրամադրված փոխառություններ	-	10,008	10,008
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	104,955	-	104,955
	<u>212,047</u>		<u>234,045</u>
Ընդամենը ակտիվներ	<u>1,847,881</u>		<u>1,862,081</u>
<i>Ջուտ ակտիվներ</i>			
Կուտակված շահույթ	41,275	(7,797)	33,478
	<u>41,275</u>		<u>33,478</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Ստացված փոխառություններ	3,892	-	3,892
Ակտիվներին վերաբերող շնորհներ	1,566,011	13,646	1,579,657
	<u>1,569,903</u>		<u>1,583,549</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	-	88,396	88,396
Ստացված փոխառություններ	28,087	-	28,087
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	204,171	(79,691)	124,480
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն	4,445	(354)	4,091
	<u>236,703</u>		<u>245,054</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	<u>1,847,881</u>		<u>1,862,081</u>

Կուտակված շահույթի վրա ճշգրտումների ազդեցության մանրամասները ներկայացված են ստորև:

Հազար դրամ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ ոչ ընթացիկ ակտիվների դուրսգրում	(11,931)
Հետաձգված հարկային ակտիվների ճշտում	4,134
	<u>(7,797)</u>